34

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ԵՎ ԶԱՔԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՑՈՒ

Քրիստինե Պապիկյան*

Մանրամասն քննարկելով 17-րդ դարի հայ պատմագրության վկայությունները երկրի քաղաքական կացության և տնտեսության վերաբերյալ, գալիս ենք մի քանի հետևությունների. Հայաստանը, գտնվելով մի կողմից Սեֆյան Պարսկաստանի, իսկ մյուս կողմից Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ, իր վրա էր կրում նրանց վարած հայակործան քաղաքականության սարսափելի հետևանքները: Ենթարկվելով քաղաքական և տնտեսական օրըստօրե ահագնացող ճնշումների, Արևելյան Հայաստանի բնակչությունը փրկության միայն մի ելք ուներ. ձևավորել և ամրապնդել գաղափարական կուռ համակարգ, համախմբել բոլոր ուժերը՝ հանուն հոգևոր ամբողջականության և էթնիկ ինքնության պահպանման: Դարաշրջանի հայ պատմագիտական մտքի նշանավոր ներկայացուցիչները (Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Քանաքեռցի, Զաքարիա Ագուլեցի, Գրիգոր Դարանեղեցի) մանրամասն ներկայացրել են սեփական ժողովրդի ծանր պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-նյութական կյանքի իրողությունները, անտարբեր չեն մնացել սեփական ժողովրդի ապրած ցավին ու տառապանքին: Այս տեսանկյունից իրենց բովանդակությամբ և տեղեկությունների արժանահավատությամբ ուշագրավ են Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն» և Զաքարիա Ագուլեցու «Օրագրություն» երկերը, որոնք իրենց մեջ պարունակում են ազգաբանական բնույթի հարուստ տեղեկությունները: Որպես ականատես պատմագիրներ, մանրամասն ներկայացրել են 17-րդ դարում Հայաստանում կատարված իրադարձությունները, նկարագրել լեզուն, բարքերը, ավանդույթներն ու սովորույթները, կեցաղը, եկեղեցի-ժողովուրդ փոխհարաբերությունները: Նրանց հաղորդած տվյալները նպաստում են վեր հանել և պարզաբանել այս երկերում տեղ գտած տնտեսական կյանքը ներկայացնող ազգաբանական նյութերը, որոնց շնորհիվ հնարավոր է պատկերացում կազմել ուշ միջնադարյան Հայաստանի տնտեսական կացութաձևի մասին:

Բանալի բառեր. Զաքարիա Քանաքեռցի, Զաքարիա Ագուլեցի, 17-րդ դարի հայ պատմագրություն, երկրագործական մշակույթ, ազգաբանական նյութեր:

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ազգագրության բաժնի ավագ լաբորանտ-հետազոտող:

Հայաստանը տևական ժամանակ պատերազմների թատերաբեմ է եղել Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Պատերազմները, բացի ռազմաքաղաքական հետևանքներից ու ազդեցություններից, առաջին հերթին ազդում էին բնակչության սոցիալ-ունեցվածքային հնարավորությունների և ընդհանրապես տնտեսության զարգացման ընթացքի ու միտումների վրա: Այս վիճակը շարունակվեց նաև 17-րդ դ., երբ հայ ժողովուրդը, ըստ մատենագիր Առաքել Դավրիժեցու, մշտապես տեսնում էր, «սարսափազդու սով-թագավորի կերպարանքը»: Անկախ բարդ քաղաքական իրավիճակից, 17-րդ դ. երկրում սկսվում է զարգացման մի նոր փուլ, երբ շոշափելի առաջընթաց են ապրում հոգևոր և նյութական մշակույթները: Սա պայմանավորված էր 1639 թ. կնքված պարսկա-թուրքական 30-ամյա հաշտության պայմանագրով: Այս համեմատական կայունությունը իր ազդեցությունն ունեցավ նաև պատմագիտական մտքի զարգացման վրա:

Ժամանակի նշանավոր պատմագիրներ Զաքարիա Ագուլեցին, Զաքարիա Քանաքեռցին, Առաքել Դավրիժեցին, Գրիգոր Դարանաղեցին մանրամասնությամբ նկարագրում են իրենց ապրած ողջ ժամանակաշրջանը:

Հոդվածում դիտարկվում են ուշ միջնադարի հայ պատմագիրներից երկուսի՝ Զաքարիա Քանաքեռցու և Զաքարիա Ագուլեցու հիմնական երկերը, սակայն ոչ թե վերջիններիս պատմագիտական, այլ առաջին հերթին ազգագրական կարևորության տեսանկյունից այն հիմնավորմամբ, որ տնտեսության, առևտրի, առանձին բնակավայրերի ու բազմաթիվ այլ նկարագրությունները անփոխարինելի են ինչպես տնտեսության՝ որպես ամբողջական համակարգի զարգացումների վերականգնման, այնպես էլ ավելի առարկայական՝ առօրեականության, առօրյա կյանքի, բնակչության տարբեր սոցիալական խմբերի զբաղմունքների դիտարկման տեսանկյունից: Դիտարկվում է հիմնականում ուշ միջնադարյան Հայաստանի գյուղատնտեսությանն կարագիրը՝ կենտրոնանալով երկրագործության և նրա հիմնական ենթաճյուղերի վրա:

Զաքարիա Քանաքեռցին ապրել և ստեղծագործել է Կոտայք և Արագածոտն գավառներում, ուստի նրա նկարագրության հիմնական հատվածները վերաբերում են հենց այս տարածքներին: Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» էջերում հանդիպում ենք ամենատարբեր տեղանունների, դրանց աշխարհագրությունը ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքը: Այսպես, նրա տվյալները ընդգրկում են հարավային հատվածներից (օր.՝ Ամիդ-Դիարբեքիր և այլն) հյուսիսում

մինչև Վրաստան, արևելքում՝ Նոր Ջուղայից մինչև արևմուտքի հայտնի տարածքները (Երզնկա, էրզրում, ամբողջ Բարձր Հայքը և այլն)։ Դուրս գալով երկրի սահմաններրից՝ հասնում է Բաղդադ, Սպահան, Թիֆլիս և այլն։ Ագուլեցու ուսումնասիրության հիմնական հատվածները տարածվում են Պարսկահայքից մինչև Սյունիքի հարավային հատվածները՝ ընդգրկելով նաև Նախիջևանի բնակավայրերը։

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»[1] աշխատությունը հայ պատմագիտական մտքի փայլուն նվաճումներից է։ Պատմագիրը շարադրել է բացառապես իր ապրած ժամանակաշրջնի պատմական իրողությունները։ Աշխատանքը շարադրված է գրաբարով, սակայն առանձին դրվագներում հեղինակը անցում է կատարում բարբառներին՝ գրելով ավելի հասկանալի և դյուրըմբռնելի լեզվով։ Նրա աշխատանքում ամփոփված են Հայաստանի պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական անցքերը, ժողովրդագրական և աշխարհագրական իրողությունները, հայ ժողովրդի հոգևոր-նյութական մշակույթը։ Հատկապես ուշագրավ են սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող իրողությունները, որոնք իրենցից ներկայացնում են ազգաբանական նյութերի մի հարուստ ժողովածու։ Այդ տվյալների վեր հանումն ու պարզաբանումը հիմք է հանդիսանում համակողմանիորեն ուսումնասիրելու հիշյալ ժամանակաշրջանի տնտեսությունն իր հիմնական ճյուղերով՝ բացահայտելով դրանց առանձնահատկությունները։ Եթե 10–17-րդ դդ. պատմագիրները հայոց պատմության հին փուլերը շարադրելիս հենվում էին վաղ միջնադարի գրավոր աղբյուրների վրա, ապա ուշ շրջանում, մասնավորապես Զաքարիա Քանաքեռցին իր «Պատմագրությունը» շարադրելիս հանդես է գալիս իբրև ականատես-վկա, որը բանահավաքի ճշգրտությամբ բերում է իր իսկ տեսած և գրառած արժանահավատ նյութերը։ Դրանով էլ պայմանավորված Քանաքեռցու գրառած փաստերի մեծ մասը դաշտային ազգագրական նյութի արժեք ունեն։ Հայ պատմագրության ասպարեզում Զաքարիա Քանաքեռցին այն եզակի հեղինակներից է, ով կարևորել է վիմական արձանագրությունների նշանակությունը և զգալի չափով արձանագրել դրանք իր աշխատությունում։

1 Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն» աշխատությունը առաջին անգամ հրատարակվել է Վաղարշապատում, 1870 թ.։ Այն թարգմանվել և հրատարակվել է նաև ֆրանսերեն Մ. Բրոսսեի կողմից 1876 թ. (Brosset M., Mémoires historiques sur les Sofis par le diacre Zakaria, Collection d'historiens armeniens, t.II, SPb)։ Աշխատությունը տպագրվել է նաև ռուսերեն, Մոսկվայում, 1969 թ.՝ Մ. Դարբինյան-Մելիքյանի թարգմանությամբ (Закарий Канакерци, Хроника), աշխարհաբար թարգմանությունը կատարել է Վ. Առաքելյանը (*Զաքարիա Քանաքեռցի*, Պատմագրություն, Երևան, 2013)։

Հայ պատմագիտական գրականության մեջ իր ուրույն տեղն ունի Զաքարիա Ագուլեցու «Օրագրություն»[2] (իր խոսքերով՝«Դավթար») աշխատությունը: Այն, չնայած իր փոքր ծավալին, ճշգրիտ ու հարուստ ազգաբանական բնույթի տեղեկություններ է պարունակում ինչպես հայերի, այնպես էլ հարևան երկրների ժողովուրդների տնտեսության, մշակույթի, հասարակական կենցաղի բազմաթիվ երևույթների վերաբերյալ: Ընդունված իրողություն է, որ այս աշխատությունը Ագուլեցու կյանքի տարեգրությունն է: Նա գրի է առել առաջին հայացքից իր համար հետաքրքրական բոլոր երևույթները՝ չանտեսելով անգամ կենցաղային առարկաները: Ագուլեցին իր «Դավթարը» շարադրել է արևելահայերենով, որի շնորհիվ էլ այսօր տեղեկանում ենք այն ժամանակվա խոսակցկան լեզվի մասին, որով հաղորդակցվել է նաև վաճառականությունը:

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրությունը» և Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը» հիշյալ ժամանակաշրջանի պատմագիտական գրականության գլուխգործոցներից են, ժամանակի հայոց պատմության շարադրման արժանահավատ իրողություններ պարունակող հավաստի սկզբնաղբյուրներ:

■■■

Հայկական լեռնաշխարհը, շնորհիվ իր կլիմայական ու բարեբեր հողային պայմանների, չափազանց նպաստավոր է եղել երկրագործությամբ զբաղվելու համար: Տնտեսության երկրագործական ճյուղը դեռևս վաղնջական ժամանակներից հանդիսացել է մարդկանց կենսապահովման հիմնական միջոցը՝ մարդուն ապահովելով հացահատիկային՝ ցորեն, գարի և այլն, ու բանջարաբոստանային կուլտուրաներով և բազմաթիվ մրգերով: Զաքարիա Քանաքեռցին հաղորդում է, որ բանջարաբոստանային կուլտուրաներից ցանում էին վարունգ, սեխ, ձմերուկ և կանաչեղեն: Նա գրում է, որ ոմն մի մահմեդական իր այգու համար պահապան է նշանակում ծնունդով կոտայքեցի Սարգսին. «Իսկ այրն ցանեաց ի մեջ որթոցն վարունգ և սեխ, մեղրապոպ[3] և խաւարտ[4]»[5]: Հնագույն ժամանակներից ամենամեծ տարածում ունեցող կուլտուրաներից էր նաև խաղողը, որի մեծաքանակ այգիները փռված էին երկրի դաշտավայրային և նախալեռնա-

2 Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւն» ձեռագիրը հրատարակվել է 1938 թ., Լևոն Քալանթարի նախաձեռնությամբ: Այն թարգմանվել և հրատարակվել է ռուսերեն 1939 թ., Երևանում «Дневник Закария Акулисского» վերնագրով:

3 *Ամատյան Հ.*, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 303: Տես նաև՝ *Գաբիկեան Կ.*, Հայ բուսաշխարհ, Երուսաղէմ, 1968, էջ 156:

4 *Ամատյան Հ.*, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 352:

5 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 1, Վաղարշապատ, 1870, էջ 59:

յին գոտիներում: Հայաստանում խաղողի մշակության նպատակը գինեգործությունն էր, և հայերը դրա պատրաստման հմուտ մասնագետներ էին: Զաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ, պարսիկ պաշտոնյաները շատ հաճախ հայերին սիրաշահելու համար բարեկարգություններ էին անում և այլ ելքեր էին փնտրում հարկեր կորզելու համար: Մուրթուզողուլու խանը սուտ պատրվակով, թե իբր թագավորը գինին Երևանում արգելել է՝ հրամայում է կնքել գինու կարասները: Կնիքները քանդեցին միայն այն ժամանակ, երբ գավառապետերը և տանուտերերը մեծ գումարների մուրհակներ տվեցին նրան: Պատմագիրը նշում է նաև «հազարափեշա» կոչվող գինու ամանի մասին. «Հրամայեցաւ տալ նմա գինի մեծ պնակիւ, զոր ինքեանք յազարափեշա ասեն»[6]:

Այգեգործության և գինեգործության վերաբերյալ տվյալները լրացնում է նաև Ագուլեցին. 1667 թ. գրում է. «Թվին ռճժզ ես Քուրդունց Աղամիրի որդի Զաքարիայ առի Ըռույունց Մարքարինանէ մին այքի, այլվի մեր հայրենի այքուն կպած: Ամեն շինեցի. մեծ ու պզտիկ Է վերք ընձան շինեցի. ծդ (54) թուման առի... »[7]:

Այն, որ հայերը տեր էին խաղողի հսկայական այգիների, գալիս են փաստելու բազմաթիվ վկայություններ, դրանցից է Ագուլեցու գրառված հետևյալ հիշատակությունը. «Թվին ՌՃԻԴ (1675) տրէ ե, արամ իբ, յունվարի զ, օրն գշաբթի, ես Զաքարեայ այսօր ջրաւրհնիք արարի: Զուրն եկեղեցումն աւրհնեցին, քանզի սաստիկ ցուրտ էր, ու բ թիզ ավել ձուն կէր. կարացան ոչ դուրս գալ»[8]: Ըստ Ագուլեցու՝ ձյունը երկար մնաց, մինչև մարտի 15-ը: Ցրտահարվեցին խաղողի բոլոր որթերը, ինչպես Ագուլիսում, այնպես էլ Դաշտում, Օրդուվար և Տրունաց գետերի մոտ:

Պատմագիր Քանաքեռցին վկայակոչելով Խոտավետ գյուղից ոմն Թորոսի պատմությունը, գրում է. «...ես փոքրաւոր էի մաքսաւորացն՝ որք ի Քասաղ. և յորժամ Գրիգոր վարդապետն և կամ ի միաբանիցն գնացին ի Շիրակավան, զի զհասն վանից ժողովեալ տարցէն ի Յօհանավանք, բերէին մեզ գինի և միրգ, և մեք ոչ առնուաք զսակ մաքսին»[9]: Նա նկարագրել է նաև Էջմիածնի վանական համալիրի երբեմնի տնտեսական հզորությունն ու փառքը, որը ձեռք էր բերվել եկեղեցուն տրվող հարկերի և նվիրատվությունների շնորհիվ: Հակոբ Զուղայեցին, կաթողիկոս օծվելուց հետո,

6 Նույն տեղում, էջ 38: «Հազարափեշա»-ն գինին կարասից հանելու աման է, որը պատրաստվում է հատուկ տեսակի դդմից:

7 *Ագուլեցի Զ.*, Օրագրութիւն, Երևան, 1938, էջ 71:

8 Նույն տեղում, էջ 125:

9 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 3, էջ 7:

զարկ տվեց բարեկարգություններին՝ նպաստելով համալիրի տնտեսության բարելավմանը. «Հաստատեաց զի յամենայն տարի տացեն ամենայն վանից Ժ լիտր ձէթ վասն եկեղեցւոյն լուցանելոյ. ևս Ի լիտր գինի ի պէտս երթևեկողացն»[10]:

Քանաքեռցին նշում է, որ խաղաղ պայմաններում հայերը մշակում ու վարում էին ցանքատարածություններն ու հանդերը, ցանում էին բրինձ, ցորեն, կորեկ, գարի, և այլն: Խոսելով Ամիրգունա խանի մասին, գրում է. «...բազում հաց եփեալ, և բառնայր ձիոց, և առեալ գնայր, շրջէր յանդաստանսն, և բաժանէր զհաց՝ որք վաստակէին յանդս»[11]: Պատմագիրը նկարագրում է կամը, կամնասայլը, կալի և կալսելու եղանակները, տեղեկություններ է հաղորդում նաև օրանի մասին: «Պատմութիւն և վարք Մխիթար եպիսկոպոսին» խորագրի տակ, պատմագիրը, բերելով տեր Մխիթարի և մելիք Փարսադանի զրույցը, գրում է. «Յաւուր միում՝ լծեալ զերիս լուծս եզանց՝ և ծեծէր զորայն ի կալն»: Փարսադանը, զգալով մոտալուտ անձրևը, մարդ է ուղարկում և պահանջում եզները՝ իր օրանը կալսելու համար, սակայն տեր Մխիթարը հրաժարվում է տալ, ասելով. «Ահա տեսանեմք՝ զի կալսեմ, զի գոնեայ ի չորոյ բարձից զկալս. վասնորոյ ոչ տամ զեզինս»[12]: Մելիքը բարկանում է, և ուղարկելով իր ծառաներին, ասում է.. «...գնացեալ բերջիք զեզինսն այնպէս լծեալ կամնասայլիւն և կամնավարաւն՝ և ամենայն որ ինչ ի վերայ նորա է»[13]:

Խոսելով Արարատյան աշխարհի շենության մասին, Քանաքեռցին բազմաթիվ վկայություններ է բերում ձիթհանների և ջրաղացների վերաբերյալ: Պատմագիրը հիշատակում է Զագավանքի (Գետարգել) ջրաղացի մասին. «և այրն ոչ գտեալ տեղի փախստեան և գնացեալ եմուտ ի ներքոյ ջրաղացի մի՝ որ ասեն Ցրտօն»[14]: Էջմիածնի, ծնունդով Կարբեցի, Հովհաննես վարդապետը. «Շինեաց ձիթաղաց մի ի գիւղն Կարբի՝ մերձ ի կալերն»[15]: Քանաքեռցին գրում է նաև Քասախ գյուղում ձիթհանի ու ջրաղացի առկայության մասին. «Թուին... եղև Հայր Խաչատուր, մականուն Ալթի-ղօլաճ: Սա շինեաց ջրաղաց մի՝ և երկուս ձիթահանս ի միում՝ տան ի գիւղն իւր Քասաղ, և ետ յիշատակ ի սուրբ Կարապետն»[16]:

10 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 2, էջ 60:

11 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 1, էջ 46:

12 Նույն տեղում, էջ 82:

13 Նույն տեղում, էջ 83:

14 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 2, էջ 21:

15 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 3, էջ 36:

16 Նույն տեղում, հ. 3, էջ 31:

Զաքարիա Ագուլեցին ևս հիշատակում է ջրաղացների մասին Վանանդում և Ագուլիսում[17]:

Քանաքեռցին իր գրաառած վիմական արձանագրության մեջ ներկայացրել է տարբեր գյուղերից Հովհանավանքին տրվող նվիրատվությունները, որոնց մեջ մեծաթիվ են արտադրական նշանակության կառույցները. «...ի Փարպի Թարաղուլու պարտէզն՝ հնձանով և կալովն, Ա բրնծահան, Բ ջրաղաց ի Փարպի, Ա ձիթաղաց ի Կարբի՝ մերձ ի կալերն, Ա ձիթաղաց, Ա ջրաղաց ի Յոհանավանք, Ա ձիթահանք՝ Բ կալով՝ Բ դրքատնով, և Ա ջրաղաց՝ որ ասի Խրխնճան՝ յԱպարան՝ ի գիւն Քասաղ»[18]:

Շնորհիվ վերոնշյալ պատմագիրների, մենք հարուստ տեղեկություններ ենք ստանում նաև այգեգործության մասին: Հետաքրքիր և ուշագրավ են հատկապես պտղատու ծառերի, տնկիների վերաբերյալ պատմագիրների վկայությունները: Համաձայն դրանց, առկա էր պտղատու ծառերի մեծ տեսականի (խնձորենի, տանձենի, կեռասենի, թթենի, ծիրանենի, բարբարիսի տերևներ և այլն): Զաքարիա Ագուլեցին իր վկայություններից մեկում ցույց է տալիս, թե որքան մեծաքանակ տնկիներ են աճեցվել Երևանում, նշում, որ դրանք որպես հարկ՝ տալիս էին մահմեդական հարկահավաքներին: Նրա հաղորդմամբ, 1670 թ. մարտի 1-ին Թավրիզից Միրզա-Իբրահիմ վեզիրի կողմից մարդ է գալիս, հայտնելով, թե՝ «Միրզէն մին այքի այ նոր գձել, գճձ (450) տնգելոյ համար տնգի այ ուզում, մալաչի տանձի, խնձորի, սումաղի (բարբարիս) և ծիրանի: Այս չափ տնգի էլ Շուռութու բերին այլվի գճձ տնգի: Դարցեալ գ, էճ յունի այլ ուրիշ տնգի Մեղրու տարան»[19]: 1680 թ. մայիսի 2-ին, ժամը 8-ին Ագուլիսում ուժգին անձրև եկավ, այնքան որ գետը վարարեց, ափերից դուրս եկավ և սելավը սրբեց՝ տարավ առվակները, ծառատունկերն ու ամբարները: Ագուլիսը կրեց մեծ վնասներ՝ գրեթե 200 թումանի[20]: Պատմագիրը այս դեպքի առնչությամբ գրում է հետևյալը. «Ես Զաքարէս մին թուման զարար քաշեցի, քանզի Ներքի այգուն մին ժ թթի տարաւ, ճանապարհ, առու տարաւ: Ամայ Տրունաց, քանց Աքուլաց շատ զարար էլաւ: Կամք Աստուծոյ եղիցի»[21]:

Արարատյան աշխարհի երբեմնի բարեբերության մասին վկայություն է թողել պատմագիր Քանաքեռցին. «Արդարև բարելի է երկիրն

17 *Ագուլեցի Զ.*, Օրագրություն, էջ 115:

18 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրություն, հ. 3, էջ 28:

19 *Ագուլեցի Զ.*, Օրագրութիւն, էջ 90:

20 Թուման՝ touman: Իրանական 17-րդ դ. ոսկե և արծաթե մետաղադրամ է, որը պարունակում է 4 ոսկե ռուբլի (10 ռիալ):

21 *Ագուլեցի Զ.*, Օրագրութիւն, էջ 149:

Արարատեան՝ ծառովք և տնկովք, պտղովք և սերմանեօք, ծաղկովք և բուսովք, լերամբք և դաշտիւք, գետովք և աղբերօք, այգեստանեօք և բուրաստանօք, թռչնօվք և չորքոտանեօք, էրէիւք և որսովք…»[22]:

Այն շրջաններում, որոնց մասին վկայություններ ունեն հեղինակները, տարածված էր հիմնականում ոռոգովի երկրագործությունը, ինչը մեծապես նպաստում էր այգեգործության, խաղողագործության և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությանը՝ ապահովելով բարձր բերքատվություն: Բավականին շատ էին ջրի համար մղվող պայքարն ու վեճերը ոչ միայն հայկական, այլ հայկական ու մահմեդական գյուղերի միջև: Ջուրը չէր բավականացնում, ոչ բոլոր համայնքներն ունեին ջրաբախշական կանոնավոր համակարգ, ուստի վեճերի գլխավոր պատճառներից մեկը ոռոգման ջրի նկատմամբ իրավունքի ձեռքբերումն էր: Այն հասանելի էր հիմնականում սոցիալապես և տնտեսապես կայուն ընտանիքներին կամ անհատներին, ովքեր սեփական միջոցներով իրենց այգիներին կից աղբյուրներ էին կառուցում: Զաքարիա Քանաքեռցին «Սպանումն տանուտէր Աւագին»[23] խորագիրը կրող պատմության մեջ ցույց է տալիս հայ գյուղացու ծանր տնտեսական դրությունն ու բավարար միջոցներ չունենալու պատճառով սեփական այգին ջրելու հնարավորության բացակայությունը: Նա վկայում է Եղվարդի տանուտեր Ավագի գլխավորությամբ, ոռոգման ջրի համար, մահմեդականների դեմ կռվելու մասին: Վկայաբերելով եղվարդցիների ջրի պատմությունը՝ պատմագիրը ցույց է տալիս ջրօգտագործման բնագավառում տիրող կամայականությունները և գյուղացիների համառ պայքարը ջրի համար: Իրողությունն այն է, որ ոռոգման համակարգ ունենալը և դրանցից օգտվելու իրավունքը հասու էր գլխավորապես հարուստ գերդաստաններին, մելիքներին և ձեռներեց վաճառականներին: Քանաքեռցին գրում է, որ Կարբիում մեծահարուստ Դովլաթ բեկը, կուտակելով մեծ հարստություն, ձեռք բերեց հողահանդեր և խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ, ձիեր, ջորիներ, տնկեց այգիներ և ծաղկաստաններ, շինեց մեծ լիճ, կառուցեց մեծ ջրամբար, հեռվից բերեց խմելու ջուր, որպեսզի ամռանը բավականացներ հանդերին[24]:

Զաքարիա Ագուլեցին նկարագրելով Ագուլիսի Ս.Թումա վանքի Պետրոս վարդապետի կատարած վիթխարի աշխատանքը, գրում է, որ նա ջրամատակարարման համակարգում նորույթ կատարեց՝ անցկացնելով ջրաբեր առուն պարիսպների միջով: Այս շինարարության համար

22 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ.2, գլ. ԼԴ, էջ 59:

23 Նույն տեղում, էջ 116:

24 Նույն տեղում, էջ 132:

վարդապետը ներդրեց ոչ միայն ֆիզիկական մեծ ջանքեր, այլև հսկայական գումարներ[25]: Ագուլիսի մելիք Մելքումի մասին պատմագիր Ագուլեցին գրում է հետևյալը. «Թվին ոկաումն (1612) Աքուլիս, որ Աքուլաց մելիք Մելքումն որ ինքնայգլուխ մին ախպիւր հանեց, տարաւ իւր տունն»[26]: Քանաքեռցին «Պատմագրության» մեջ վկայակոչում է Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ձուղայեցու բարեկարգությունները, որը կատարել է ջրառոռոգման և ջրամատակարարման համակարգում: Նա լուծում է էջմիածնի այգիներն ու հանդերը ջրելու խնդիրը. «Այլև ի ներքոյ նաղմ (փոս, ծակ, ական, 2. առու, կոյանոց) արարեալ՝ յԲ տեղւոջ է հանեալ ջուր, մինն հեռի ի գեղջէն էջմիածնայ՝ տարեալ յանդաստանս ի յոռոգանել զարտորայսն. և մինն բերեալ ի գիւղն, զի ի ձմերանի արբցեն զանասունք: Եւ ի վերայ այսմ՝ ջրոյ շինեաց ջրաղացս և բրնձահանս. և արար ծով՝ և ելից ձկամբ»[27]:

Մանրամասն ուսումնասիրելով 17-րդ դ. հայ պատմագիրներ Զ.Քանաքեռցու և Զ.Ագուլեցու երկերը, կարող ենք հետևություն անել ուշ միջնադարյան Հայաստանի մի շարք վայրերին բնորոշ երկրագործական մշակույթի և անասնապահության վերաբերյալ: Անկախ երկրի քաղաքական ու տնտեսական կացությունից, զգալի զարգացում էր ապրում երկրագործությունը: Իրենց պատմագիտական երկերում անդրադառնալով հայերի շրջանում տարածված հիմնական արհեստներին, նշված հեղինակները նշում են որմնադրությունը, քարկոփությունը, կոշկակարությունը, նաև՝ դրամ հատելու և մոմ սպիտակեցնելու արհեստները: Հայտնի է նաև, որ Շահ Աբասը, իրականացնելով հայերի տեղահանումն ու բռնագաղթը, Պարսկաստան է քշում հիմնականում հմուտ արհեստավորներին՝ միտում ունենալով խթանել երկրում արհեստագործության զարգացմանը: Զաքարիա Ագուլեցին նշում է նաև ատաղձագործության մասին: Նա վկայում է, որ շատ հայեր մասնագիտացել էին ոռոգման հորեր կառուցելու գործում, այնքան, որ շատերը բարձր աշխատավարձի ակնկալիքով աշխատում էին շահի մոտ, ու չնայած տաժանակիր աշխատանքին, ստանում էին չնչին աշխատավարձ: Նա գրում է, թե 1671թ. վախճանվեց շահի ատաղձագործ (դուրգար) ջուղայեցի վարպետ Հակոբջանը, որ. «Շատ թոլու ջրի հորեր կու շինէր: Տարին լ (30) թուման շահիցն դօնլուղ կուտէր (ողորմություն էր ստանում)»[28]: Համաձայն պատմագիրների, Հայաստանի տնտեսության վրա կործանարար ազդեցություն ունեցան Շահ Աբասի

25 *Ագուլեցի Զ.*, Օրագրություն, էջ 78:

26 Նույն տեղում, էջ 141:

27 *Քանաքեռցի Զ.*, Պատմագրութիւն, հ. 2, էջ 62:

28 *Ագուլեցի Զ.*, Օրագրություն, էջ 103:

իրականացրած բռնագաղթը և ջալալիների արշավանքները: Ծանր հետևանքներ ունեցան հատկապես անասունների, արտերի և նույնիսկ մարդկանց վրա դրված հարկերն ու տուրքերը:

КУЛЬТУРА ЗЕМЛЕДЕЛИЯ В АРМЕНИИ 17-го ВЕКА СОГЛАСНО ИСТОРИКАМ ЗАКАРИИ КАНАКЕРЦИ И ЗАКАРИИ АГУЛЕЦИ

Кристине Папикян

Резюме

Детально исследуя свидетельства армянской историографии 17-го века о политическом и экономическом положении страны, мы приходим к нескольким выводам: Армения, находясь под владычеством Сефевидского Ирана с одной стороны и Османской Турции с другой, испытывала на себе страшные последствия политики, направленной на истребление армян. Видные представители армянской исторической мысли своей эпохи (Аракел Даврижеци, Закария Канакерци, Закария Агулеци, Григор Даранахеци) подробно изложили тяжелые реалии историко-политической, социально-экономической, духовно-материальной жизни своего народа и не оставались в стороне от страданий и боли собственного народа. С этой точки зрения по своему содержанию и достоверности сведений достойны внимания труды Закарии Канакерци «Хроника» и Закарии Агулеци «Дневник», которые содержат ценные демографические данные. Как свидететели происходящих событий они подробно описали события, происходящие в Армении в 17-м веке, а также язык, обычаи, быт, традиции и отношения между церковью и народом. Передаваемые в этих трудах сведения способствуют освещению и выявлению данных об экономической жизни и хозяйственного уклада позднесредневековой Армении.

Ключевые слова: Закария Канакерци, Закария Агулеци, армянская историография 17-го века, культура земледелия, демографические данные.

AGRICULTURAL CUSTOMS IN ARMENIA IN THE 17th CENTURY ACCORDING TO HISTORIOGRAPHERS ZAKARIA KANAKERTSI AND ZAKARIA AGULETSI

Christine Papikian

Summary

A detailed analysis of the information on political condition and the economics of Armenia, provided by the historiographers of the 17th century, brings us to the following conclusions: Armenia, being under the reign of the Safavid Empire and the Ottoman Empire, suffered greatly under their policy of destruction of the Armenians. The prominent Armenian historiographers of the 17th century (Arakel Davrizhetsi, Zakaria Kanakertsi, Zakaria Aguletsi, Grigor Daraneghetsi) provide a detailed description of the politics, history, and the harsh conditions in the social and economic life of the time, showing empathy to the affliction

of their own nation. Rich ethnographic material can be found in the works of Zakaria Kanakertsi ("Historiography") and Zakaria Aguletsi ("Memoirs"): being first-hand witnesses, they give an accurate depiction of events, language used at the time, customs and traditions, everyday life, and relation between the church and the common people. The ethnographic information present in these historical texts allow us to recreate the economic life of late medieval Armenia.

Keywords: Zakaria Kanakertsi, Zakaria Aguletsi, Armenian historiography of the 17th century, agriculture, ethnographic material.